

ՍԻՈՆ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ 1930-Ի ՀԱՄԱՐ

Ճարտարապետի Կարապետ՝ Ուստրէն, Էմիր- Տէյրբէնճեան Գարեգին՝ Ֆիլիպէէն, «Գրա-
դեան Եղբարց» Մարտէլ:



Հ. Թ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

1.— Նուպարաւէնի կառուցման նամաձայնութիւնը վերջնականապէս ստորագրուած ըլլալով Հայաստանի Կառավարութեան եւ Միութեան Կեդր. Վարչ. Ժողովի կողմէ, ակադեմիկոս Թամանեանի նախագահութեամբ կազմուած Յանձնախումբը ձեռնարկած է շինութեան նախապատրաստական աշխատութեան: Առ այդ Միութիւնը Կառավարութեան յանձնած է առաջին մասնավճարը 50,000 տոլար: Մօտեւ կը դիկուի երկրորդ մասնավճարը 75,000 տոլար:

Ինչպէս յայտնի է, Կառավարութիւնը Նուպարաւէնի յաւկացուցած է 1500 հեկտար հողամաս, Հրազդանի շրջավայրին մէջ, Երեւանի հարաւային եւ Նոր Գաւիթի արեւելեան կողմը: Աւանը պիտի օժտուի հաղորդակցու-
թեան եւ ջրաբաշխութեան միջոցներով եւ առհասարակ տնտեսական միջոցներով:

Կառավարութիւնը Նուպարաւէնի տուներն ու հողերը պիտի վերապահէ արտասահմանէն հեռոնքէն փոխա-
դրուելիք քրտապաշտօնականներուն, որոնց ընտրութիւնը պիտի կատարուի Միութեան առաջարկութեան վրայ, Կառավարութեան կազմած յանձնախումբերուն միջոցաւ, եւ Կառավարութեան ու Միութեան կողմէ համախո-
հաբար պատրաստուած ծրագրի մը համաձայն:

Կառավարութիւնը ամէն կերպով պիտի ստատէ Նուպարաւէնի ապագայ բնակիչներուն տնտեսական բարգա-
ւաճումը, մասնաւորապէս հողագործական մեքենաներու նախարարութեամբ, վարկերու հաստատումով եւ ամառնա-
յին մարզադէպքներու յաւկացումով, եւ երեք տարի անցնէ զերծ կացուցանելով երկրագործական կամ կալուա-
ծային ամէն տեսակ տուրքերէ եւ հարկերէ:

Բնակարաններու արժէքին փոխաւէն, Նուպարաւէն ւանի մէջ տեղադրուած զաղթականներուն կողմէ
վերադարձուելիք բոլոր գումարները ամբողջովին պիտի յաւկացուին ողջ ւանին բարգաւաճումը, վերադառ-
նալով ընտրուելիք եւ փոխադրուելիք նոր զաղթականներու տեղադրումը եւ հողերու բարելաւումը ու անոնց
օգտագործումը:

Նուպարաւէնի գլխաւոր հրապարակին վրայ յիշատակարան մը պիտի կանգնուի, ուր պիտի արձանագրուին
անուններ ամէն անոնց որ, իրենց նուիրաբերութեանց կամ աշխատութեանց կարեւորութեան բերմամբ, ւանին
սեղծմանը իրապէս օժանդակած պիտի ըլլան: Բայ ասի, Նուպարաւէնի գիւղամասերը, բաղերը, փողոցները
կամ հաստատութիւնները պիտի կրնան յորդորուիլ այն փողոցներէ կամ վայրերէ անուններով որոնց հայ բնիկ-
ները կամ բնակիչները նոյն նպատակին համար կարեւոր օժանդակութիւն մը բնձնուած պիտի ըլլան:

Հայրենակիցներու կողմէ այդ նպատակաւ Նուպարաւէնի յաւկացուած գումարները Միութեան կողմէ պիտի
կրկնապատկուին:

2.— Միութեան ներքին Բարեւար Անգամ Տ. Պատրիկ Կիւլպէնկեանի մահուան տարի, Կեդր. Ժողովը
իր վերջերեւ նիստին մէջ սուգի եւ յարգանքի արտայայտութիւններ քուս եւ որոշեց ցաւակցութիւն յայտնել սգա-
կիր պարագաներուն:

Այս առիթի փոխան ծաղկեպսակի յօգուս որբերու Միութեան քրտն են նուիրաւորութիւններ, զիւստո-
ւաբար Վսեմ. Պողոս Նուպար փաշա Տր. 5000, Տէլիկ Մարի Կիւլպէնկեան, Տեւր Տ. Քէլէկեան եւ Պ. Էս-
մէրեան 2000 տկան, Տ. Ս. Ղարապետ 1000:

3.— Միութեան 25րդ տարեդարձին առիթի կազմակերպուելիք Յօբելեանական ձեռնարկներու զիւստո-
ւաբար պիտի ըլլայ հրատարակութիւնը պատկերազարդ նոխասիւ պակեմասեանի մը, որուն համար կազմուած է
Յանձնախումբ մը, Կեդր. Ժողովէն՝ Տեւր Աղաբոն Պէլի, Կառավարականի եւ Մարտիկեանի, իսկ Բարապետի
Յանձնախումբէն՝ Տեւր Բաշայեանի եւ Զօրանեանի մասնակցութեամբ: Ոսկեմասեանը պիտի պարտականէ Միու-
թեան 25 տարուան զործունէութիւնը, բազմաթիւ պատկերներով, կենսագրականներով, վիճակացոյցներով, եւն-
տիկն շնորհակալութեամբ ստացած ենք Ոսկեմասեանի հրատարակութեան ծախսերուն համար 200 անգլ. օսկի
Վսեմ. Պողոս Նուպար փաշայէ եւ նոյնքան եւս Աղաբոն Պէլի ձեռամբ:

4.— Որոշուած ըլլալով մասնաւոր Վկայականներով գնահատել առնուազն 20 տարի Միութեան անդա-
մակցողները, որոնցմէ 1906—1910 թուականին արձանագրուածները պիտի նկատուին հիմնադիր անդամներ, ա-
նոնց ընդհանուր ցուցակը պատրաստելու հրահանգ տրուած է բոլոր Մասնաճիւղերուն:

Բարիկ, 20 Յունիս 1930

Գ Ի Ի Ա Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Բաղմաթիւ արեւմտահայ տաղանդաւոր գրողներ պատերազմի ընթացքին զոհուած են առանց հայ գրականութեան կտակած ըլլալու առանձին հատորով իրենց գեղարուեստական էջերը: Ուրիշներ զեռ պատերազմէն առաջ մեռած են ցանուցիր թողլով իրենց երկերը՝ զանազան օրոթերթերու և պարբերականներու մէջ:

Հայ ժողովուրդի համատարած թշուառութեան, ընթացիկ հոգերու ու պանդուխտ կեանքի բաղմաթիւ դժուարութեանց հետեանքով, հայ մտաւորականութիւնը, պանդուխտ ու ցանուցիր ինք ալ՝ պատերազմի դադարումէն ահա՝ տասը տարի յետոյ տակաւին հաւաքական որ եւ է լուրջ ձեռնարկ չ'ըներ ամփոփելու եւ հրատարակելու համար հայ գրչի այդ ազնիւ աշխատաւորներուն ցրուած էջերը: Համեմատական հանգրստի օրեր են այսուհանգերձ ու պէտք է որ այլևս կատարուի այդ աշխատանքը:

Զայն կատարելու համար՝ պէտք է սկսիլ անմիջապէս աշխատանքի, մեկնելով համիստ ու ժողովրդական ծրագրէ մը: Այսպէս է որ Փարիզ ապրող ու գրականութեամբ եւ հայ մշակոյթով շահագրգռուած կարգ մը անձեր՝ այս նպատակով կազմած են Նահասակ Գրագիտներու Բարեկամներ անունով հրատարակչական մը որ պարբերական հրատարակութիւններով պիտի աշխատի փրկել արեւմտահայ նահատակ կամ մեռած զբաղէտներու երկերը՝ ցրուած զանազան պարբերականներու կամ թերթերու մէջ:

Այս ծրագիրը իրագործելու համար Զեղ կը ղրկուին Նուիրատոմսեր՝ կոչ ընելով քեր սիրոյն դէպի հայ գրականութիւնը ու խնդրելով որ զանոնք ամենակարճ ժամանակամիջոցի ընթացքին ընդունին և տարածէք ձեր բարեկամներու շրջանակին մէջ ու այս վերջին պարագային Նուիրատուներու անուններուն եւ հասցէներուն հետ միասին ղրկէք մեր զանձապահի հասցէին: Այս Նուիրատոմսերուն փոխարէն հրատարակչականը պիտի ղրկէ իր առաջին իսկ հրատարակած գիրքը անմիջապէս որ լոյս ընծայուի:

Աւելի լայն գաղափար տալու համար սկսուած աշխատանքի մասին ահա Զեղ մեր ծրագրէն կէտեր՝

Ստորեւ անուններնին նշանակուած անձերը.—

Ս. Վրացեան, Մկրտիչ Պարսամեան, Լեւոն Մոզեան, Բժ. Լ. Գրիգորեան, Մկրտիչ Նիկանց, Կարօ Սասունի, Շ. Նարդունի, Վազգէն Շուշանեան եւ Օհան Կարօ Փարիզի մէջ կազմած են հրատարակչական մարմին մը «ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» անունով եւ հետեւեալ ծրագրով:

1. — Նպատակ

1. — Նահասակ Գրագիտներու Բարեկամները կ'ստաջադրեն հաւաքի ու հրատարակութեան տղ նահասակ կամ մեռած գրողներու երկերը՝ կցելով անոնց՝ գրողին կեանքին ու գործին շուրջ ուսումնասիրութիւններ: Այս հրատարակութեանց ընթացքին նախապատուութիւն կը տրուի այն նահասակ հեղինակներուն որոնցիկ տաւանին հաստատով լոյս տեսած երկեր չկան:

2. — Միջոցներ

2. — Այս ծրագրին գործադրութեան որպէս սկզբնաւորութիւն եւ մեկ անգամուան համար՝ լոյս կ'ընծայուին նուիրատուներ՝ հասը մեկ տարւոյ՝ քարձ տակով դրամ ունեցող երկիրներու եւ 20 ֆր. քոյր միւս երկիրներու մէջ: Այս տուեալներուն արժէքը հետագային կը վերադարձուի հրատարակուած գրքերով:

15. — Հրատարակչականը տարին անգամ մը հաշիւ կուտայ նախ համետոս տեղեկագրութեան մը միջոցաւ՝ կցուած հրատարակուած հաստիւն ու երկրորդ հայերէն քերքերու մէջ:

16. — Հրատարակուած հաստիւններու վաճառումէն գոյացած քոյր հասոյքները կը յաւկացուին նոր հաստիւններու հրատարակութեան:

«Նահատակ Գրագէտներու Բարեկամներու» հասցէն.

Բժ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

126, Rue du Faubourg St. Denis, PARIS (10e)

Ծանօթ ազգասէր մասնագիր Յարմա-
րայ Ե. Սեթեանց Նորնուղայեցի, Կարկա-
յէն, ՍԻՌՆԻ դրած է իր գործերէն մէյմէկ օ-
րինակ, ինքնագիր յիստորիագրութիւններով:
ՍԻՌՆ, իր խորին ճանաչակալիքը կը յայտնէ մե-
ծայարգ նախատախի:

24. HISTORY OF THE ARMENIANS IN INDIA,
from the earliest time to the present day, by
MESROB J. SETH. Armenian examiner at the
university of Calcutta. Published by the author
at 11 Wellesley Square, E. Calcutta, Mdcccxcv.
p. 8° 190.

25. Բաց նամակ Մեսրոպայ Յակոբ Սեթեանց Նոր-
նուղայեցոյ որ ի Կարկաթա Ննդկաց՝ առ լաւ
եւ բանիմաց ճայրենակիցս իւր որք ի Նոր-Ջու-
ղա, յ'Ապաւան' եւ Ննդկաստան, ի Բրմաս-
տան, ի Ջավա, յ'Անգլիա եւ յայլ տեղիս. մեծ
8° էջ 8. բազմագրած:

26. THE SOCIETY OF MEKHITAR by Mesroby J.
Seth. Calcutta 1924. 8° p. 26.

27. THE REPUBLIC OF ARMENIA, A Public Lec-
ture delivered on Sunday, the 29th June 1924.
at the Hall of the Armenian College. By Mes-
roby J. Seth. Calcutta. 1924. 8° p. VI+77.

28. Գրիչ Ոսկեգրիչ Մատենագրին Մեսրոպայ Գաւ-
թեան Թաղադեանց եւ կենսագրական ակնարկ.
գրեաց Մեսրոպ Յակոբ Սեթեանց. Տպ. Վենե-
տիկ. Ս. Ղազար 1926. էջ միջակ 8° 31:

29. ARMENIANS AND THE EAST INDIA COM-
PANY. By Mesroby J. Seth. [A paper read at
the Eighth Meeting at the Indian Historical Re-
cords Commission held at Lahore in November
1925.] Calcutta 1926. g. 8° 16.

30. HINDOOS IN ARMENIA 150 years before
Christ. By Mesroby J. Seth. [A paper read at
the Ninth Meeting of the Indian Historical Re-
cords Commission held at Luck. now in De-
cember, 1926.] Calcutta. 1927. g. 8° 16.

31. A Lecture delivered at «Galstaun Park» By Mr.
Mesroby J. Seth. on Sunday evening, the 24th
day of April 1927, on the Occasion of the ce-
lebration in Calcutta of the twenty-first Anni-
versary of the ARMENIAN GENERAL BENE-
VOLENT UNION p. 7:

32. ARMENIANS AT AGRA AND GWALIOR From
days of Akbar the great to the Indian Mutiny of
1857, by Mesroby J. Seth, M. R. A. S. (Lon-
don). A paper written for the Twelfth Meeting
of the «Indian Historical Records Commission»,
held at Gwalior, in December, 1929. [Reprin-
ted from Vol. XXXIX, Part I, of «Bengal Past
and present»], Calcutta. 1930. p. 26.

33. PAULE HENRY - BORDEAUX, Antaram de
Trébizonde. Roman. Albin Michel Éditeur, 22,
Rue Huyghens. Paris (14°). 8° p. 315: Prix:
15 Francs.

34. ԱԶԳԻՆ ՎԱՐԻՉԵՐԸ. Բ. Մաս, գրեց (Գարա-
գաշեան) Սեյժոնքեան Թովմաս, Տպ. «Սահակ-
Մեսրոպ», Գահիրէ, 1930, 8° էջ 64. Գին 5 Ե. Դ.

35. ԱԶԳԱՍԱՆԵԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԻՉԻ ՀԱՅՈՑ
ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ 39րդ Տարեշրջանի—1929:
էջ 8° 12. Դեղարուեստ. Հայ. Տպարան Խ.
Մաթիկեան. Բարիկ:

36. Ազգային Մատենադարան. ՃԻՐ. ՅԱՐԳԱՆԷ
ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԻՆ, Երեւոյի Գեղար-
տեան Գաղափից. Գրեց Ալ. Սարգսյան.
Վիեննա Միսիթարեան Տպարան, 1930. 8° էջ
128. Գին՝ Ջուլիցերական Ֆրանք 1, 50:

37. ԹՈՐՈՍ ԵՄԻՌԱՅ [Կատակերգութիւն 2 արար],
Հեղինակ՝ Կ. Պիտիկ, Հրատարակ. «Սիմոն»
Մատենաշարի, Թիւ 2. Տպ. Կ. Տօնիկեան. Պէյ-
րուս, 8° էջ 18. գին՝ 3 Ֆրանք: Հասցէ փոթ-
արկի Թիւ 718:

38. ԵՐԱԳԻՐ — ԿԱՆՈՆԱԳԻՐ Հայ Ուսուցչական Մի-
ութեան Լիբրանիս, 1930. Տպ. «Հրազդան»
Պէյրուս. 1930. 8° էջ 14:

39. Մատենադար Բուժանք Թիւ 3.— Տորթ. Լ.
Դրիզորեան. ՄԱՐԴ ՄԸ ՇԻՆԵՆԷ կամ Մարդկա-
յին մարմնի կազմախօսութիւնը, բնախօսութիւ-
նը եւ համառօտ ծանօթութիւններ ակադեմի-
անութեան եւ առողջապահութեան մասին: Տպ.
Փարիզ 1930. լայն 8° էջ 188. Գին՝....

40. ԿՈՆԴԱԿ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ,
Կիլիկիոյ Սահակ Բ. Կիլիկի. կողմէն տրուած
1930 Յուլիս 29ին. 4° էջ 8. Տպագրութիւն Սըր-
բոց Յակոբեանց, Երուսաղէմ:

41. ՅՈՒՇԱԳԻՐԻ Աստուր Յ. Մակարեան Թրակիոյ
Հայ Դպրոցներու. (Տպ.) Սելանիկ, 1929. 8°
էջ 640. Գին 100 Տրախիմ:

42. ՀԱՅՐԵԱՍԻԷ ԵՒ ԱՆԲԱՍԻԷ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԸ.
Եղուարդ Սարկաւազ Ոսկերիչեան: Տպգր. Սըրբոց
Յակոբեանց, Երուսաղէմ. 1930. էջ 16. Գին 1
Շիլիմ:

43. ՊԱՏՄՈՒԱՆՔՆԵՐ. Յովնանէս Աւետեան: Տպ.
Կ. Տօնիկեան, Պէյրուս. 1930. էջ 31. Գին 20
Ս. Դ.:

44. 1931 ՊԱՏԻ ՕՐԱՅՈՑՑ, Սըրբոց Մատենա-
ցներով Համեմուած. Դ. Տէր Դազարեան: Տպ.
Գոլէն. Հալէպ. Գին 5 Էր. առաստաղմանի համար:

45. ՎԱՀԱԿՆԵԱՆ ՔԵՐԹՈՒԱՆՆԵՐ. Գ. Կեղարեա-
նի, Վենետիկ. Միսիթարեան Տպարան. 1930. էջ
83:

46. ԱՅՍՊԷՍ ԱՊՐԵՑԱՆԷ. Յովն. Աւագեան. Նիւ
Եաթ. 1930. էջ 135. Գին 1 Տրախիմ:

47. Նախասկ Գրագէտներու Բարեկամներ.
Մատենադար Թ. 1. Ռոմիէն ԶԱՐԴԱՐԵԱՆԻ
ԱՄԲՈՂԶԱԿԱՆ ԵՐԿԵՐ Ա. Արձակ էջեր եւ Հե-
փաքներ. Փարիզ. 1930. էջ 215. Բ.:

48. ԳՐՊԱՆԻ ՏԱՐԵՅՈՑՑ. Սիմոն Գաբամանեանի,
1931, ԺԲ. Տարի. Տպ. Կ. Պոլիս, 1930. 8° էջ
223. Գին 8 Էրանք 40 սէնթ: